ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

Ընդունված է 2019 թվականի դեկտեմբերի 13-ին

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱԺԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 10. Համայնքների վարչական սահմաններում ընդգրկվող պետական սեփականություն հանդիսացող հողամասերի օտարումը, անհատույց ~~(մշտական)~~ օգտագործման, վարձակալության և կառուցապատման տրամադրելը

Համայնքների վարչական սահմաններում ընդգրկված պետական սեփականություն հանդիսացող հողերը (բացառությամբ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքով սահմանված դեպքերի) համայնքների ղեկավարների կողմից օտարվում, ինչպես նաև անհատույց ~~(մշտական)~~ օգտագործման, վարձակալության և կառուցապատման իրավունքով տրամադրվում են Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով: